ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 164-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2005.11.01/27(204) Հոդ.366	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Գյուղատնտեսության նախարար	*Ընդունման ամսաթիվը*	29.09.2005
Ստորագրող մարմինը	Գյուղատնտեսության նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	29.09.2005
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.11.2005	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ (ՍԽԵՄԱՆ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
11 հոկտեմբերի 2005 թ.
Պետական գրանցման թիվ 10605398

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

29 սեպտեմբերի 2005 թ. N 164-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ (ՍԽԵՄԱՆ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթին և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի օգոստոսի 29-ի «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 659-Ա որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ կետի պահանջին համապատասխան

Հրամայում եմ՝

1. Սահմանել հացահատիկային, բանջարաբոստանային, յուղատու մշակաբույսերի և խոտաբույսերի սերմնաբուծության հետևյալ հերթագայությունը (սխեման)՝

ա) առաջին տարվա փորձարկման տնկարան,

բ) երկրորդ տարվա փորձարկման տնկարան,

գ) բազմացման տնկարան, որտեղից ստացվում են նախահիմնային (օրիգինալ) սերմեր,

դ) սուպերէլիտային (հիմնային) սերմեր՝ նախահիմնային սերմերից ստացված սերմեր,

ե) էլիտային (հիմնային) սերմեր՝ սուպերէլիտային սերմերից՝ ստացված սերմեր,

զ) 1-ին վերարտադրության սերմեր՝ էլիտային սերմերից ստացված սերմեր,

է) 2-րդ վերարտադրության սերմեր՝ 1-ին վերարտադրության սերմերից ստացված սերմեր:

2. Սահմանել կարտոֆիլի սերմնաբուծության հետևյալ հերթագայությունը (սխեման).

ա) նախահիմնային (օրիգինալ) տնկանյութ՝ ընտրասերողի կողմից ստացված տնկանյութ կամ մերիստեմային հյուսվածքից ստացված մինի պալարներ,

բ) սուպերէլիտային (հիմնային) տնկանյութ՝ նախահիմնային տնկանյութից ստացված տնկանյութ,

գ) էլիտային (հիմնային) տնկանյութ՝ սուպերէլիտային տնկանյութից ստացված տնկանյութ,

դ) 1-ին վերարտադրության տնկանյութ՝ էլիտային տնկանյութից ստացված տնկանյութ,

ե) 2-րդ վերարտադրության տնկանյութ՝ 1-ին վերարտադրության տնկանյութից ստացված տնկանյութ:

Նախարար **Դ. Լոքյան**